

**Ե Կ Ա Մ Ո Ւ Տ Ն Ե Ր Ի Կ Ա Ն Խ Ա Տ Ե Ս Ո Ւ Մ**

«Հայաստանի Հանրապետության 2013 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի նախագծում (սույն մասում այսուհետ՝ Նախագիծ) եկամուտների ընդհանուր գումարը ծրագրվել է 1,031.6 մլրդ դրամի չափով կամ 2012 թվականի համար հաստատված<sup>1</sup> 911.6 մլրդ դրամ, 2011 թվականին փաստացի<sup>2</sup> ստացված 859.9 մլրդ դրամ համադրելի գումարների համեմատությամբ համապատասխանաբար 13.2%-ով և 20.0%-ով ավելի:

2013 թվականի բյուջետային եկամուտների կազմում մեծ տեսակարար կշիռ կունենան հարկերը և պետական տուրքերը՝ 96.25%, պաշտոնական դրամաշնորհները և այլ եկամուտները կապահովեն տարեկան բյուջետային եկամուտների համապատասխանաբար 1.59%-ը և 2.16%-ը:

Ակնկալվում է, որ 2013 թվականին պետական բյուջեի եկամուտներ/ՀՆԱ հարաբերությունը կկազմի 22.74%՝ 2012 թվականի ծրագրային 21.61%-ի և 2011 թվականի փաստացի 22.77%-ի դիմաց: ՀՀ 2011-2013թթ պետական բյուջեների եկամուտների համեմատականը բերված է սույն բացատրագրի N 1 աղյուսակում:

ՀՀ 2013-2015թթ պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրով (սույն մասում այսուհետ՝ ՄԺԾԾ) 2013 թվականի համար պետական բյուջեի եկամուտները ծրագրվել են 1001.2 մլրդ դրամի չափով: Նախագծով ծրագրված բյուջետային մուտքերը ՄԺԾԾ-ով հաստատված ցուցանիշների համեմատ կրել են հետևյալ փոփոխությունները.

<sup>1</sup> Սույն մասում այսուհետ և այսուհետ որպես 2012 թվականի հաստատված ցուցանիշներ ներկայացվում են «ՀՀ 2012 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով հաստատված ցուցանիշները:

<sup>2</sup> 2011-2013թթ փաստացի/ծրագրային ցուցանիշների համադրելիությունն ապահովելու նպատակով ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի փաստացի մուտքերի կազմում ներառված չեն 2011 թվականին փաստացի ստացված 21.0 մլրդ դրամի չափով մուտքերը, այդ թվում՝

ա) «ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն ՀՀ 2011 թվականի պետական բյուջեից ծախս-եկամուտ գործառույթի եղանակով ստացված 1.2 մլրդ դրամը (ԱԱՀ-ի գծով՝ 0.1 մլրդ դրամ, պետական տուրքի գծով՝ 1.1 մլրդ դրամ):

բ) ՀՀ պետական կառավարման մարմինների 2011 թվականի արտաբյուջետային միջոցների փաստացի մուտքերը (որոնց գծով տվյալ տարվա պետական բյուջեի մասին օրենքով ծրագրային ցուցանիշներ չեն սահմանվել, սակայն «ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 11-րդ մասի համաձայն փաստացի ցուցանիշները արտացոլվել են ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի կատարման հաշվետվություններում), ընդամենը 19.8 մլրդ դրամ:

Աղյուսակ 3.1 ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի եկամուտների՝ ՄԺԾԾ-ով հաստատված և Նախագծով առաջարկվող գումարները (մլրդ դրամ)

Եկամտատեսակը	ՄԺԾԾ-ով հաստատված	Նախագծով առաջարկվող	Տարբերություն (Նախագիծ-ՄԺԾԾ)
Պետական բյուջեի եկամուտներ, որից՝	1,001.2	1,031.6	30.4
1. Հարկային եկամուտներ և պետական տուրք	961.9	992.9	31.0
2. Պաշտոնական դրամաշնորհներ	18.0	16.4	-1.6
3. Այլ եկամուտներ	21.3	22.3	1.0

2013 թվականի համար ՄԺԾԾ-ով հաստատված և Նախագծով առաջարկվող եկամուտների տարբերությունների հիմնավորումները ներկայացված են ստորև՝ եկամուտների կանխատեսումներին վերաբերվող սույն բացատրագրի առանձին բաժիններում:

### 1. ՀԱՐԿԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐ

Հարկային եկամուտները և պետական տուրքերը 2013 թվականի համար ծրագրվել են 992.9 մլրդ դրամի չափով՝ ՄԺԾԾ-ով նախատեսված 961.9 մլրդ դրամի դիմաց: Հարկային եկամուտների և պետական տուրքերի գծով 2013 թվականի համար ծրագրված ցուցանիշը 2012 թվականի համար հաստատված և 2011 թվականի փաստացի համադրելի մուտքերից<sup>3</sup> ավելի է համապատասխանաբար 118.6 մլրդ դրամով (13.6%-ով) և 218.2 մլրդ դրամով (28.2%-ով):

ՄԺԾԾ-ով նախատեսվածի նկատմամբ 2013 թվականի հարկային եկամուտների և պետական տուրքերի գծով մուտքերը Նախագծում ծրագրված են շուրջ 31.0 մլրդ դրամով ավելի: Հարկային եկամուտների այս ծավալն ակնկալվում է լրացուցիչ հավաքագրել 2013 թվականի

<sup>3</sup> 2011-2013թթ փաստացի/ծրագրային ցուցանիշների համադրելիությունն ապահովելու նպատակով ա) 2011 թվականի հարկային եկամուտների և պետական տուրքերի կազմում ներառված չեն սույն մասի 2-րդ տողատակում նշված՝ ՀՀ 2011 թվականի պետական բյուջեից ծախս-եկամուտ գործառույթի եղանակով ստացված (1.2 մլրդ դրամ), ինչպես նաև արտաբյուջետային միջոցների (1.5 մլրդ դրամ) փաստացի գումարները, որոնք հաշվառվում են հարկային եկամուտների և պետական տուրքերի կազմում: բ) 2011, 2012թթ հարկային եկամուտների և պետական տուրքերի կազմում փաստացի/ծրագրային ներառված են պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով փաստացի մուտքերը համապատասխանաբար 105.3 մլրդ դրամի և 123.4 մլրդ դրամի չափով (հաշվի է առնվել 2013թ հունվարի 1-ից ուժի մեջ մտնող «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածը, որի համաձայն՝ այդ օրենքն ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած են ճանաչվելու «Եկամտահարկի մասին» և «Պարտադիր սոցիալական ապահովության վճարների մասին» ՀՀ օրենքները և այն հանգամանքը, որ ըստ գնահատականների օրենսդրական այս փոփոխությունների ազդեցությունը բյուջետային եկամուտների վրա չեզոք է):

հունվարի 1-ից զինծառայողներին, նրանց հավասարեցված անձանց և փրկարարական ծառայության ծառայողներին եկամտային հարկի դաշտում ներառելու արդյունքում<sup>4</sup>:

Հարկային եկամուտների և պետական տուրքերի 2013 թվականի ծրագրային մակարդակը կազմում է ՀՆԱ-ի 21.88%-ը՝ 2012 թվականի համար ծրագրային<sup>5</sup> և 2011 թվականի փաստացի համապատասխանաբար 20.73%-ի և 20.51%-ի դիմաց:

2013 թվականի հարկային եկամուտները ծրագրելիս օգտագործվել են այն մակրոտնտեսական ցուցանիշների կանխատեսումները, որոնք էական ազդեցություն ունեն առանձին հարկատեսակների հարկման բազայի ձևավորման վրա: Մասնավորապես, հիմք են ընդունվել ստորև բերված աղյուսակում ներկայացված մակրոտնտեսական ցուցանիշները.

*Աղյուսակ 3.2 Առանձին մակրոտնտեսական ցուցանիշների 2011-2013թթ փաստացի/կանխատեսումային մեծությունները*

Ցուցանիշներ	2011	2012	2013
	փաստացի	կանխատեսում	
Անվանական ՀՆԱ (մլրդ դրամ)	3,776.4	4,136.4	4,537.3
ՀՆԱ-ի իրական աճ	104.7	107.1	106.2
ՀՆԱ-ի դեֆլյատոր	104.2	102.4	103.2
Ապրանքների ներմուծում (մլն ԱՄՆ դոլար)	-3,657.7	-3,858.8	-4,071.1

Ինչպես և նախորդ տարիներին, 2013 թվականի հարկային եկամուտների և պետական տուրքերի գծով տարեկան ցուցանիշը ծրագրվել է ըստ նախորդ տարիների հավաքագրման և մակրոտնտեսական միջավայրի զարգացման միտումների, օրենսդրական փոփոխությունների և վարչարարական միջոցառումների իրականացումից ակնկալվող լրացուցիչ մուտքերի:

Նախորդ տարիների հավաքագրման և մակրոտնտեսական միջավայրի զարգացման միտումների հիման վրա հարկային եկամուտները և պետական տուրքերը 2013 թվականի համար ծրագրվել են 934.3 մլրդ դրամի չափով:

Օրենսդրական փոփոխությունների և վարչարարական միջոցառումների իրականացումից 2013 թվականին ակնկալվում է հավաքագրել շուրջ 31.0 մլրդ դրամ և 27.7 մլրդ դրամ:

Սույն բացատրագրի առանձին հարկատեսակների վերաբերյալ բաժիններում ներկայացված կանխատեսումների մեթոդաբանությունն ու համապատասխան ծրագրային ցուցանիշները վերաբերվում են ըստ նախորդ տարիների հավաքագրման և մակրոտնտեսական միջավայրի զարգացման միտումների ծրագրված՝ 2013 թվականի հարկային եկամուտների և պետական տուրքերի

<sup>4</sup> Համապատասխան ՀՀ օրենքների նախագծերը գտնվում են շրջանառության մեջ:

<sup>5</sup> Հաշվարկված է որպես «ՀՀ 2012 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով հաստատված համապատասխան ցուցանիշի և 2012 թվականի ՀՆԱ-ի կանխատեսվող մեծության հարաբերություն:

գծով 934.3 մլրդ դրամի չափով մուտքերի գնահատականներին, որոնք կատարվել են համապատասխան մուտքերի գծով ընթացիկ տարվա հունվար-օգոստոս ամիսների փաստացի և տարեկան սպասողական, 2002-2011թթ տարեկան փաստացի մուտքերի, և, ինչպես արդեն վերը նշվեց, մակրոտնտեսական շրջանակում կատարված առանձին մակրոտնտեսական ցուցանիշների կանխատեսումների հիման վրա: Հարկ է նշել, որ այս գործոնի ազդեցությամբ 2013 թվականի հարկային եկամուտները և պետական տուրքերը կանխատեսվել են նախորդ տարիներին կիրառված կանխատեսման մեթոդներով (հաշվարկները կատարված են այլ հավասար պայմաններում):

### **1.1. ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿ**

Ավելացված արժեքի հարկի (այսուհետև՝ ԱԱՀ) գծով 2013 թվականի բյուջետային մուտքերը կանխատեսվել են 413.8 մլրդ դրամի չափով, որը 85.4 մլրդ դրամով գերազանցում է 2011 թվականի համադրելի փաստացի մակարդակը:

ԱԱՀ-ի հարկի գծով 2013 թվականի կանխատեսումային մուտքերը ներառում են օրենքով սահմանված ընդհանուր կարգով վճարվող գումարները, ինչպես նաև ՀՀ-ում արտադրվող և ՀՀ ներմուծվող ծխախոտի արտադրանքի հաստատագրված վճարների կազմում ընդգրկված ԱԱՀ-ի հաշվարկային գումարները (հաստատագրված վճարի համապատասխանաբար 20% և 15%), որոնք գնահատվել են 6.5 մլրդ դրամի չափով: Ծխախոտի արտադրանքի հաստատագրված վճարները ծրագրվել և ներկայացվում են առանձին:

Օրենքով սահմանված ընդհանուր կարգով վճարվելիք ԱԱՀ-ն գնահատելու համար դիտարկվել է ազգային հաշիվների համակարգի տնօրինվող եկամտի օգտագործման հաշվի «Վերջնական սպառման ծախսեր» հոդվածի փաստացի և մակրոտնտեսական զարգացումների շրջանակում կանխատեսված ցուցանիշները: Նախապես գնահատվել է հարկի փաստացի բազան<sup>6</sup>: Դրա համար վերջնական սպառման ծախսերը նվազեցվել են՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ տնտեսության որոշ ճյուղերում (գյուղատնտեսություն, ֆինանսական գործունեություն, շինարարություն, առևտուր, տրանսպորտ, պետական կառավարում, կրթություն, առողջապահություն և սոցիալական ծառայությունների մատուցում, տնային տնտեսությունների վարման ծառայություններ) ստեղծված ավելացված արժեքն ամբողջությամբ կամ ոչ լրիվ ծավալով է ենթակա ԱԱՀ-ով հարկման: Վերջնական սպառման ծախսերը նվազեցվել են նաև մակրոկանխատեսումների համաձայն 2013 թվականի համար ծրագրված զուտ անուղղակի հարկերի գումարի չափով: Հաջորդ նվազե-

<sup>6</sup> Այսուհետև՝ «փաստացի բազա» հասկացությունն իրենից ներկայացնում է տվյալ տարվա ՀՆԱ-ի՝ տվյալ հարկատեսակի համար գնահատված հարկունակ մասը:

ցումը կատարվել է ծխախոտի<sup>7</sup>, դիզելային վառելիքի և բենզինի<sup>8</sup> սպառման հաշվարկային գումարների չափով: Բացի նշված նվազեցումներից, ԱԱՀ-ի հարկման բազան մեծացվել է ակցիզային հարկի և մաքսատուրքի կանխատեսումային գումարների չափով, քանի որ վերջիններս, համաձայն «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի, ներառվում են ԱԱՀ-ի հարկման բազայում:

2013 թվականին սպառումից գանձվելիք ԱԱՀ-ն (առանց բենզինի ներմուծման ԱԱՀ-ի) հաշվարկվել է՝ այդ տարվա գնահատված փաստացի բազայի նկատմամբ կիրառելով 2012 թվականի փաստացի դրույքաչափը<sup>9</sup>:

Հաշվի առնելով 2012 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ մտած օրենսդրական փոփոխությունը, համաձայն որի բենզինի ներմուծման համար հարկերը վճարվում են օրենքով սահմանված ընդհանուր կարգով, նախկին հաստատագրված վճարի փոխարեն, առանձին գնահատվել է բենզինի ներմուծումից 2013 թվականին ակնկալվող ԱԱՀ-ն: Հաշվարկներում հիմք է ընդունվել 2013 թվականին բենզինի ներմուծման ֆիզիկական ծավալների կանխատեսումը, 1 տոննայի համար վճարման ենթակա ԱԱՀ-ի և ակցիզային հարկի նվազագույն հանրագումարի՝ 112.0 հազար դրամի<sup>10</sup> կազմում ԱԱՀ-ի տոկոսային չափը՝ գնահատված 2012 թվականի հունվար-օգոստոս ամիսների փաստացի մուտքերի վերաբերյալ գանձապետական տվյալներով:

Այսպիսով, վերը նշված մեթոդով հաշվարկված ԱԱՀ-ից 2013 թվականին հավաքագրման ենթակա բյուջետային մուտքերի գումարին ավելացնելով ծխախոտի համար գանձվող հաստատագրված վճարների կազմում ներառված ԱԱՀ-ի հաշվարկային գումարները, ստացվում են 2013 թվականի ծրագրային մուտքերը ԱԱՀ-ից:

## 1.2. ԱԿՑԻԶԱՅԻՆ ՀԱՐԿ

Ակցիզային հարկի գծով 2013 թվականի բյուջետային մուտքերը գնահատվել են 56.3 մլրդ դրամի չափով, որը 16.9 մլրդ դրամով գերազանցում է 2011 թվականի փաստացի մակարդակը:

Այս հարկի 2013 թվականի կանխատեսվող գումարի՝ 52.5%-ը կազմում են ՀՀ-ում արտադրվող և ՀՀ ներմուծվող ծխախոտի արտադրանքի հաստատագրված վճարներում ներառված ակցիզային հարկի հաշվարկային գումարները (հաստատագրված վճարի համապատասխան

<sup>7</sup> ՀՀ ներմուծվող ծխախոտի և ՀՀ-ում արտադրված ծխախոտի արտադրանքի համար սահմանված է հաստատագրված վճար:

<sup>8</sup> 2012 թվականի հունվարի 1-ից բենզինի և դիզելային ներմուծման համար հարկերը վճարվում են ընդհանուր կարգով, ընդ որում՝ դիզելային ներմուծումը ազատված է ԱԱՀ-ից: Այս դեպքում բենզինի ներմուծումից գանձվելիք ԱԱՀ-ի հաշվարկները կատարված են առանձին:

<sup>9</sup> Այստեղ և այսուհետ՝ տվյալ հարկատեսակի գծով փաստացի կամ սպասողական (հաշվարկային) մուտքերի հարաբերությունը փաստացի բազային:

<sup>10</sup> «Ակցիզային հարկի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն «Բենզինի 1 տոննայի համար սահմանված ակցիզային հարկի և օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվարկված ԱԱՀ-ի հանրագումարը 112000 ՀՀ դրամից պակաս լինելու դեպքում ակցիզային հարկն ավելացվում է այն չափով, որպեսզի բենզինի 1 տոննայի համար գանձվող ակցիզային հարկի և ԱԱՀ-ի հանրագումարը հավասարվի 112000 ՀՀ դրամի:»:

նաբար 80% և 76.5%): Ինչպես արդեն վերը նշվեց, ծխախոտի արտադրանքի հաստատագրված վճարները ծրագրվել և ներկայացվում են առանձին:

2011 թվականի փաստացի մուտքերի նկատմամբ 2013 թվականին ակնկալվող մուտքերի նման մեծ տարբերությունը օրենքով սահմանված ընդհանուր կարգով վճարվող գումարների դեպքում հիմնականում պայմանավորված է «Ակցիզային հարկի մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխություններով, որոնց համաձայն 2012 թվականի հունվարի 1-ից մի կողմից ավելացվեցին առանձին ենթակազմային ապրանքների դրույքաչափերը, մյուս կողմից ենթակազմային ապրանքների կազմը համալրվեց նոր ապրանքախմբերով՝ շարժիչային յուղերով և 25.0 մլն դրամ և ավելի մաքսային արժեք ունեցող կամ մինչև 2 տարին ներառյալ թողարկման տարեթիվ և 4500 սմ<sup>3</sup> և ավելի շարժիչի աշխատանքային ծավալ ունեցող թեթև մարդատար ավտոմեքենաներով:

Ինչպես և ԱԱՀ-ի դեպքում, հաշվարկները կատարվել են ըստ օրենքով սահմանված ընդհանուր կարգով և հաստատագրված վճարների տեսքով վճարվող գումարների:

Օրենքով սահմանված ընդհանուր կարգով 2013 թվականին վճարվելիք ակցիզային հարկի գումարները կանխատեսվել են ներքին շրջանառությունից և ներմուծումից՝ հաշվի առնելով այդ տարվա համար կանխատեսվող սպառման իրական և ապրանքների ներմուծման աճի տեմպերը (5.0% և 6.8%) և ընթացիկ տարվա համապատասխան սպասողական մուտքերը:

Դիզելային վառելիքի և բենզինի ներմուծումից 2013 թվականին գանձվելիք ակցիզային հարկի գումարները գնահատվել են առանձին: Բենզինի դեպքում, հաշվի առնելով բենզինի ներմուծմանն առնչվող 2012 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ մտած՝ վերը նշված օրենսդրական փոփոխությունը, 2013 թվականի ակցիզային հարկը գնահատվել է ԱԱՀ-ի դեպքում կիրառված մոտեցմամբ: Դիզելային վառելիքի ներմուծումից ակցիզային հարկը կանխատեսվել է ներմուծման ֆիզիկական ծավալների գնահատականի և «Ակցիզային հարկի մասին» ՀՀ օրենքով 1 տոննայի համար սահմանված նվազագույն դրույքաչափի՝ 32.5 հազար դրամի հիման վրա:

### **1.3. ՇԱՀՈՒԹԱՀԱՐԿ**

Շահութահարկի գծով 2013 թվականի բյուջետային մուտքերը կանխատեսվել են 127.1 մլրդ դրամի չափով, որը 29.3 մլրդ դրամով գերազանցում է 2011 թվականի փաստացի մակարդակը:

Շահութահարկի գծով բյուջետային եկամուտների կանխատեսման նպատակով դիտարկվել են ազգային հաշիվների համակարգի եկամուտների ձևավորման հաշվի «Տնտեսության զուտ շահույթ և զուտ խառը եկամուտներ» (ըստ ճյուղերի) հոդվածի փաստացի և կանխատեսված մակրոտնտեսական ցուցանիշները, որոնց հիման վրա գնահատվել է շահութահարկի փաստացի բազան: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տնտեսության որոշ ճյուղերում (գյուղատնտեսություն, առևտուր, տրանսպորտ) ստեղծված շահույթը ոչ լրիվ ծավալով է հարկվում շահութահարկով,

տնտեսության զուտ շահույթը վիճակագրական տվյալների հիման վրա ճշգրտվել (նվազեցվել) է նշված ճյուղերի՝ շահութահարկով չհարկվող զուտ շահույթի հաշվարկային գումարի չափով: Շահութահարկի գծով 2013 թվականի բյուջետային մուտքերը գնահատվել են վերը նշված մեթոդով 2013 թվականի համար կանխատեսված հարկման բազայի և 2012 թվականի փաստացի դրույքաչափի հիման վրա:

#### **1.4. ԵԿԱՄՏԱՅԻՆ ՀԱՐԿ**

Եկամտային հարկի գծով 2013 թվականի բյուջետային մուտքերը կանխատեսվել են 225.9 մլրդ դրամի չափով, որը 21.3 մլրդ դրամով գերազանցում է եկամտահարկի և պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով 2011 թվականի փաստացի մուտքերի հանրագումարի մակարդակը:

Հաշվարկները կատարված են պարտադիր սոցիալական ապահովության վճարներ վճարողների կողմից ներկայացված հաշվետվությունների հիման վրա ըստ աշխատավարձի միջակայքերի (մինչև 20 հազար դրամ, 20-100 հազար դրամ և 100 հազար դրամից ավելի) հաշվարկված 2007-2011թթ վարձու աշխատողների թվաքանակի, տարեկան ԱՎՈՒՄ-ի (աշխատանքի վարձատրությանն ուղղվող միջոցների) վերաբերյալ առկա փաստացի տվյալների հիման վրա՝ հաշվի առնելով «Եկամտային հարկի» մասին ՀՀ օրենքով սահմանված դրույքաչափերը:

#### **1.5. ՄԱՔՍԱՏՈՒՐՔ**

2013 թվականի բյուջետային մուտքերը մաքսատուրքի գծով գնահատվել են 43.7 մլրդ դրամի չափով, որը 7.4 մլրդ դրամով գերազանցում է 2011 թվականի փաստացի մակարդակը:

2013 թվականի մաքսատուրքի կանխատեսվող գումարը ներառում է ՀՀ ներմուծվող ծխախոտի համար հաստատագրված վճարում ներառված մաքսատուրքի հաշվարկային գումարը 1.9 մլրդ դրամի չափով:

Այս հարկատեսակի դեպքում ևս հաշվարկները կատարվել են օրենքով սահմանված ընդհանուր կարգով և հաստատագրված վճարների տեսքով վճարվող գումարների համար առանձին: Առաջին դեպքում մուտքերը կանխատեսվել են մաքսատուրքի 2012 թվականի փաստացի դրույքաչափի կանխատեսվող մեծության և 2013 թվականի փաստացի բազայի գնահատականի հիման վրա, որը հաշվարկվել է որպես ընդհանուր ներմուծման և մաքսատուրքով չհարկվող ապրանքների ներմուծման կանխատեսված ծավալների տարբերություն:

Ծխախոտի արտադրանքի հաստատագրված վճարները ծրագրվել և ներկայացվում են առանձին:

### **1.6. ՀԱՍՏԱՏԱԳՐՎԱԾ ՎՃԱՐ՝ Ծխախոտի արտադրանքի համար**

Ծխախոտի արտադրանքի հաստատագրված վճարի գծով 2013 թվականի համար ծրագրվել են 37.8 մլրդ դրամի չափով մուտքեր, որը 12.6 մլրդ դրամով գերազանցում է 2011 թվականի փաստացի մակարդակը:

2011 թվականի փաստացի մակարդակի նկատմամբ ակնկալվող 12.6 մլրդ դրամ աճը պայմանավորված է ինչպես ներմուծվող և ներքին արտադրության ծխախոտի արտադրանքի ֆիզիկական ծավալների աճով, այնպես էլ «Ծխախոտի արտադրանքի մասին» ՀՀ օրենքով նախատեսված դրույքաչափերի աճով: Մասնավորապես, ըստ նշված օրենքի 3-րդ հոդվածի ֆիլտրով սիգարետների համար 2013 թվականին կկիրառվի 1000 հատի համար ներմուծման դեպքում՝ 8000 դրամ, ներքին արտադրության դեպքում՝ 7000 դրամ, 2011 թվականին գործող համապատասխանաբար 7000 դրամի և 5500 դրամի դիմաց:

2013 թվականին ծխախոտի արտադրանքի համար հաստատագրված վճարների հաշվարկի համար նախապես գնահատվել են ՀՀ-ում արտադրվող/իրացվող և ՀՀ ներմուծվող ծխախոտի միջին ամսական ծավալները՝ նախորդ տարիների փաստացի և ընթացիկ տարվա սպասողական տվյալների հիման վրա: Ծխախոտի արտադրանքի հաստատագրված վճարների հաշվարկային գումարները ՀՀ օրենսդրությամբ սահմանված համամասնություններով բաշխվել են ըստ առանձին հարկատեսակների՝ ԱԱՀ-ի, ակցիզային հարկի և մաքսատուրքի:

### **1.7. ՀԱՍՏԱՏԱԳՐՎԱԾ ՎՃԱՐՆԵՐ՝ օրենքով սահմանված գործունեության առանձին տեսակների համար**

Օրենքով սահմանված գործունեության առանձին տեսակների համար հաստատագրված վճարների գծով 2013 թվականին գանձվելիք գումարները ծրագրվել են 7.5 մլրդ դրամի չափով, որը 13.2 մլրդ դրամով պակաս է 2011 թվականի փաստացի մակարդակից: Այս դեպքում հարկ է հաշվի առնել կատարված մի շարք օրենսդրական փոփոխություններ, որոնց համաձայն հաստատագրված վճարով հարկվող գործունեության տեսակների մի խումբ 2012 թվականի հունվարի 1-ից, իսկ մյուս խումբը՝ 2012 թվականի ապրիլի 1-ից դադարել են հաստատագրված վճարի հարկման օբյեկտ հանդիսանալուց՝ տեղափոխվելով արտոնագրային վճար վճարողների դաշտ: Ընդ որում, առաջին խումբ գործունեության տեսակների գծով 2011 թվականի փաստացի մուտքերը կազմել են մոտ 1.0 մլրդ դրամ, իսկ երկրորդի գծով՝ 4.9 մլրդ դրամ: 2013 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ մտնող մեկ այլ օրենսդրական փոփոխությամբ խաղատների գործունեության կազմակերպումը և շահումով խաղային ավտոմատների շահագործումը ևս դուրս կգան հաստատագրված վճարի հարկման օբյեկտների կազմից: Գործունեության այս տեսակների գծով 2011 թվականի



փաստացի մուտքերը կազմել են 5.7 մլրդ դրամ: Ստացվում է՝ հաստատագրված վճարների գծով 2011 թվականի փաստացիի նկատմամբ 2013 թվականին ակնկալվող մուտքերի 13.2 մլրդ դրամ տարբերությունից 11.6 մլրդ դրամը բացատրվում է միայն 2012-2013թթ ուժի մեջ մտնող օրենսդրական փոփոխություններով:

Հաստատագրված վճարների գծով մուտքերի հավաքագրման վրա բացասական ազդող գործոնների թվում հարկ է նշել նաև «Հաստատագրված վճարների մասին» ՀՀ օրենքի 59.8-րդ հոդվածի կիրառման ազդեցությունը: Ըստ այդ հոդվածի՝ օրենքի դրույթները չեն տարածվում ավտոտրանսպորտային միջոցների գազալցման այն կայանների (կետերի) միջոցով իրականացվող ավտոտրանսպորտային միջոցների գազալցման (գազալիցքավորման) գործունեության նկատմամբ, որտեղ, ՀՀ կառավարության սահմանած տեխնիկական կանոնակարգին համապատասխան, առկա են լիցքավորման բաշխիչ աշտարակներ: Հարկ է նշել, որ 2012 թվականի 8 ամսում նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ գործունեության այս տեսակի գծով հավաքագրվել են մոտ 1.0 մլրդ դրամով պակաս մուտքեր:

2013 թվականի մուտքերը հաշվարկվել են ըստ գործունեության առանձին տեսակների, հաշվի առնելով 2012 թվականի սպասողականը և 2013 թվականին առևտրի (3.5%) ոլորտում ակնկալվող տնտեսական աճի ցուցանիշը:

## **1.8. ԲՆԱԿԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ԲՆՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՎՃԱՐՆԵՐ**

Բնապահպանական և բնօգտագործման վճարների գծով 2013 թվականի բյուջետային մուտքերը կանխատեսվել են 23.0 մլրդ դրամի չափով, որը 4.5 մլրդ դրամով գերազանցում է 2011 թվականի փաստացի մակարդակը (տվյալների համադրելիությունն ապահովելու նպատակով 2011 թվականի փաստացի մուտքերի կազմում ներառվել են նաև մետաղական օգտակար հանածոների արդյունահանումից վճարվող ռոյալթիների գծով մուտքերը 6.4 մլրդ դրամի չափով):

2013 թվականի մուտքերը գնահատվել են ըստ վճարների առանձին տեսակների, հաշվի առնելով 2005-2012թթ փաստացի/սպասողական մուտքերը, արդյունաբերության ճյուղի 2013 թվականին ակնկալվող տնտեսական աճի՝ 9.2%-ի (հարկային մարմինների կողմից գանձվող վճարների դեպքում) կամ ապրանքների ներմուծման աճի՝ 6.8%-ի (մաքսային մարմինների կողմից գանձվող վճարների դեպքում) տեմպերը:

### 1.9. ԱՅԼ ՀԱՐԿԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ<sup>11</sup>

Այլ հարկային եկամուտների գծով 2013 թվականին գանձվելիք գումարները ծրագրվել են 10.1 մլրդ դրամի չափով 2011 թվականին փաստացի հավաքագրված 7.6 մլրդ դրամի դիմաց: Այս խումբ հարկատեսակների գծով 2013 թվականի եկամուտների աճը հիմնականում պայմանավորված է արտոնագրային վճարներից ակնկալվող մուտքերի աճով, որն իր հերթին բացատրվում է հաստատագրված վճարների հարկման օբյեկտ հանդիսացող գործունեության տեսակները վերը նշված օրենսդրական փոփոխությունների արդյունքում արտոնագրային վճարների դաշտ տեղափոխվելու հանգամանքով:

### 1.10. ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐ

Պետական տուրքերի գծով 2013 թվականի բյուջետային մուտքերը ծրագրվել են 26,961.2 մլն դրամի չափով՝ 2012 թվականի համար հաստատված<sup>12</sup> 20,631.3 մլն դրամի և 2011 թվականին փաստացի ստացված<sup>13</sup> 21,232.3 մլն դրամի դիմաց:

Պետական տուրքերի գծով 2013 թվականի բյուջետային մուտքերի կանխատեսումները կատարվել են ըստ դրանց նախորդ տարիների փաստացի հավաքագրումների միտումների, հաշվի առնելով ՀՀ օրենսդրության մեջ կատարված առանձին փոփոխություններն ու լրացումները, ինչպես նաև պետական տուրքի յուրաքանչյուր տեսակի առանձնահատկությունները:

Պետական տուրքի առանձին տեսակների գծով 2013 թվականի բյուջետային մուտքերի կանխատեսումները, հաշվարկման մեթոդների համառոտ նկարագրությունը, ծրագրային և փաստացի ցուցանիշների համեմատականները ներկայացվում են ստորև:

1. Դատարան տրվող հայցադիմումների, դիմումների ու գանգատների, դատարանների վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար, ինչպես նաև դատարանների կողմից փաստաթղթերի պատճեններ տալու համար գանձվող պետական տուրքերի գծով 2013 թվականի մուտքերը գնահատվել են 2012 թվականի սպասողական մակարդակին հավասար՝ 851.7 մլն դրամ, որը համապատասխանաբար 162.2 մլն դրամով և 149.4 մլն դրամով գերազանցում է 2012 թվականի համար հաստատված և 2011 թվականի փաստացի մակարդակներից:

<sup>11</sup> Ներառում է ճանապարհային վճարները, հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարները, ռադիոհաճախականության օգտագործման թույլտվության տրամադրման (գործողության ժամկետի երկարաձգման) պարտադիր վճարները, պետական բյուջե վճարման ենթակա հողի հարկն ու գույքահարկը, արտոնագրային վճարները, պետական բյուջե մուտքագրվող այլ հարկային եկամուտները:

<sup>12</sup> Այս բաժնում որպես ՀՀ 2012 թվականի պետական բյուջեի պետական տուրքի համար հաստատված ցուցանիշներ դիտարկվել են ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 22-ի N 1919-Ն որոշման N 6 հավելվածով ՀՀ 2012 թվականի պետական բյուջեի պետական տուրքի գծով հաստատված ցուցանիշները:

<sup>13</sup> Առանց ՀՀ 2012 թվականի պետական բյուջեի՝ սույն մասի 2-րդ տողատակում նշված 1.1 մլրդ դրամի չափով այն եկամուտների, որոնք հաշվառվում են պետական տուրքերի կազմում:

Պետական տուրքի այս տեսակի գծով 2012 թվականի սպասողական ցուցանիշը ծրագրվել է 2012 թվականի առաջին 7 ամիսների փաստացի մուտքերի նկատմամբ կիրառելով 2010-2011 թվականների տարեկան մուտքերում առաջին 7 ամիսների մուտքերի տեսակարար կշիռների միջինացված ցուցանիշը:

2. Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու և Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը փոխելու համար գանձվող պետական տուրքի գծով 2013 թվականի մուտքերը կանխատեսվել են 53.5 մլն դրամի չափով, 2012 թվականի համար հաստատված 24.3 մլն դրամի, սպասողական 42.1 մլն դրամի և 2011 թվականին փաստացի ստացված 25.0 մլն դրամի դիմաց:

Պետական տուրքի այս տեսակի գծով 2013 թվականի ցուցանիշը ծրագրվել է, ելնելով ընթացիկ տարվա փաստացի հավաքագրման միտումներից:

3. Հյուպատոսական ծառայությունների կամ գործողությունների համար գանձվող պետական տուրքերի գծով 2013 թվականի մուտքերը կանխատեսվել են 1,955.3 մլն դրամի չափով՝ 2012 թվականի համար հաստատված 2,026.5 մլն դրամի, սպասողական 2,253.9 մլն դրամի և 2011 թվականին փաստացի ստացված 1,913.6 մլն դրամի դիմաց:

Պետական տուրքի այս տեսակի գծով 2013 թվականի ցուցանիշը ծրագրվել է, ելնելով 2011-2012թթ փաստացի մուտքերի հավաքագրման միտումներից, 2012 թվականի սպասողական մուտքերից, հաշվի առնելով ՀՀ կառավարության Եվրոպական Միության անդամ և ոչ անդամ 29 պետությունների քաղաքացիների մուտքի վիզայի ազատականացման 2013 թվականից իրականացվելիք քաղաքականությունը: Հաշվարկներում, հիմք ընդունելով «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածը<sup>14</sup>, հավաքագրման միտումներից բացի հաշվի է առնվել նաև այդ տարիներին ՀՀ դրամի նկատմամբ ԱՄՆ դոլարի փոխարժեքը:

4. Պետական գրանցման համար գանձվող պետական տուրքերի գծով 2013 թվականի մուտքերը կանխատեսվել են 3,715.0 մլն դրամի չափով, որը համապատասխանաբար 223.4 մլն դրամով, 144.1 մլն դրամով և 445.2 մլն դրամով ավելի է 2012 թվականի համար հաստատված, սպասողական և 2011 թվականին փաստացի ստացված ցուցանիշներից:

Պետական գրանցման համար գանձվող պետական տուրքերի գերակշռող մասը՝ 98.0%-ը կամ 3,639.7 մլն դրամը 2013 թվականին ապահովվելու է պետական տուրքի հետևյալ 4 խմբերի հաշվին՝

---

<sup>14</sup> ՀՀ տարածքից դուրս իրականացվող ծառայությունների կամ գործողությունների համար պետական տուրքերը արտարժույթով գանձելիս հիմք է ընդունվում ՀՀ կենտրոնական բանկի կողմից հրապարակված նախորդ տարվա՝ արժույթային շուկաներում ձևավորված միջին տարեկան փոխարժեքը:

• ավտոմեքենայի պետական համարանիշ տալու և կորցրածը վերականգնելու, գյուղատնտեսական ինքնագնաց մեքենաների գրանցման և պետական համարանիշ տալու և կորցրածը վերականգնելու համար գանձվող պետական տուրքեր, որոնց գծով 2013 թվականի մուտքերը ծրագրվել են 1,242.2 մլն դրամի չափով (պետական գրանցումից 2013 թվականի պետական տուրքերի կանխատեսվող մուտքերի ամբողջ ծավալի 33.4 %-ը), որը 2012 թվականի հաստատված, սպասողական և 2011 թվականի փաստացի ցուցանիշներից ավելի է համապատասխանաբար 295.5 մլն դրամով, 59.9 մլն դրամով և 283.6 մլն դրամով:

2011 թվականի փաստացի և 2012 թվականի ծրագրային ցուցանիշների նկատմամբ 2012 թվականի սպասողական և 2013 թվականի համար ծրագրված ցուցանիշների աճի վրա ազդող գործոններն են՝

ա) Քաղաքացիների մի մասը նախընտրում են իրենց կողմից վարած տրանսպորտային միջոցը այլ անձի անունով հաշվառումից հանել և ներկայացնել իրենց անունով հաշվառման, քանի որ ճանապարհային երթևեկության կանոնների նկատմամբ արագաչափերի և դիտարկման տեսախցիկների համակարգերի կիրառման հետ կապված վարչական իրավախախտումների վերաբերյալ կազմված որոշումն ուղարկվում է այն քաղաքացուն, ում անունով հաշվառված է տրանսպորտային միջոցը, այլ ոչ նրա, ով առուվաճառքի պայմանագրով վարում է այն: Այս գործընթացի հետ կապված ընթացիկ տարում նկատվում է պետհամարանիշերի պահանջարկի ավելացում:

բ) Տրանսպորտային միջոցների հաշվառման մեծ պահանջարկ ունեցող համարանիշերի չափանիշները սահմանող ՀՀ կառավարության 2012թ փետրվարի 16-ի 233-Ն որոշումը ուժի մեջ մտնելուց հետո (2012թ մարտի 31) նկատվում է նոր համարանիշերի պահանջարկի ավելացում:

Պետական տուրքի այս տեսակի գծով 2013 թվականի ցուցանիշը ծրագրվել է, ելնելով 2012 թվականի առաջին 7 ամիսների և 2011 թվականի վերջին 5 ամիսների փաստացի մուտքերի հիման վրա գնահատված 2012 թվականի սպասողական մուտքերից:

• գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցում կատարելու համար գանձվող պետական տուրքեր, որոնց գծով 2013 թվականի մուտքերը կանխատեսվել են 2012 թվականի սպասողական մուտքերի չափով՝ 900.0 մլն դրամ (պետական գրանցումից 2013 թվականի պետական տուրքերի կանխատեսվող մուտքերի ամբողջ ծավալի 24.2 %-ը), 2012 թվականի համար հաստատված 1,023.0 մլն դրամի և 2011 թվականին փաստացի ստացված 879.8 մլն դրամի դիմաց:

Պետական տուրքի այս տեսակի գծով 2012 թվականի սպասողական մուտքերը ծրագրվել են 2012 թվականի առաջին 7 ամիսների փաստացի մուտքերի նկատմամբ կիրառելով 2009-2011 թվականների տարեկան մուտքերում առաջին 7 ամիսների տեսակարար կշիռների միջինացված ցուցանիշը:

• լիցենզառուներին տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության համապատասխան նմուշի փաստաթուղթ տրամադրելու համար գանձվող պետական տուրքեր, որոնց գծով 2013 թվականի մուտքերը ծրագրվել են 695.0 մլն դրամի չափով (պետական գրանցումից 2013 թվականի պետական տուրքերի կանխատեսվող մուտքերի ամբողջ ծավալի 18.7 %-ը), 2012 թվականի հաստատված 808.8 մլն դրամի, սպասողական 761.1 մլն դրամի և 2011 թվականին փաստացի ստացված 734.0 մլն դրամի դիմաց:

Հաշվարկները կատարված են ըստ 2013 թվականին պարտադիր տեխնիկական զննություն անցնելիք մեքենաների թվաքանակի (28 հազար ընդհանուր օգտագործման և 250 հազար ոչ ընդհանուր օգտագործման մեքենաներ) կանխատեսումների:

• ավտոմեքենայի (մոտոցիկլետի) տեխնիկական անձնագիր (գրանցման վկայական) և կորցրած տեխնիկական անձնագրի (գրանցման վկայականի) կրկնօրինակ տալու համար գանձվող պետական տուրքեր, որոնց գծով 2013 թվականի մուտքերը ծրագրվել են 615.4 մլն դրամի չափով (պետական գրանցումից 2013 թվականի պետական տուրքերի կանխատեսվող մուտքերի ամբողջ ծավալի 16.6 %-ը), 2012 թվականի հաստատված 476.1 մլն դրամի, սպասողական 586.1 մլն դրամի և 2011 թվականին փաստացի ստացված 470.8 մլն դրամի դիմաց:

Պետական տուրքի այս տեսակի գծով 2013 թվականի ցուցանիշը ծրագրվել է, ելնելով 2012 թվականի առաջին 7 ամիսների և 2011 թվականի վերջին 5 ամիսների փաստացի մուտքերի հիման վրա գնահատված 2012 թվականի սպասողական մուտքերից: Հաշվի է առնվել նաև պետական համարանիշերի պահանջարկի աճով պայմանավորված տեխնիկական անձնագրերի պահանջարկի աճը:

5. Մշակութային արժեքների արտահանման կամ ժամանակավոր արտահանման իրավունքի վկայագիր տալու համար գանձվող պետական տուրքերի գծով 2013 թվականի մուտքերը ծրագրվել են 2012 թվականի համար հաստատված և սպասողական 1.0 մլն դրամի չափով՝ 2011 թվականին փաստացի ստացված 1.2 մլն դրամի դիմաց:

6. Գյուտերի, օգտակար մոդելների, արդյունաբերական նմուշների, ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների, ֆիրմային անվանումների, ինտեգրալ միկրոսխեմաների տոպոլոգիաների իրավական պաշտպանության հետ կապված իրավաբանական նշանակություն ունեցող գործողությունների համար գանձվող պետական տուրքերի գծով 2013 թվականի մուտքերը կանխատեսվել են՝ 273.7 մլն դրամի չափով, որը 2012 թվականի համար հաստատված, սպասողական և 2011 թվականի փաստացի ցուցանիշներից պակաս է համապատասխանաբար 37.3 մլն դրամով, 22.2 մլն դրամով և 46.2 մլն դրամով:

Պետական տուրքի այս տեսակի գծով 2013 թվականի մուտքերը ծրագրվել են 2012 թվականի սպասողական մուտքերի նկատմամբ կիրառելով 2012/2011 թթ աճի տեմպը: Իր հերթին 2012

թվականի սպասողական մուտքերը ծրագրվել են 2012 թվականի առաջին 7 ամիսների մուտքերի նկատմամբ կիրառելով 2007-2011 թվականների տարեկան մուտքերում առաջին 7 ամիսների տեսակարար կշիռների միջինացված ցուցանիշը:

7. Ֆիզիկական անձանց տրվող իրավաբանական նշանակություն ունեցող փաստաթղթերի, որոշակի ծառայությունների կամ գործողությունների համար գանձվող պետական տուրքերի գծով 2013 թվականի մուտքերը կանխատեսվել են 4,199.4 մլն դրամի չափով՝ 2012 թվականի համար հաստատված 2,559.0 մլն դրամի, սպասողական 2,789.9 մլն դրամի և 2011 թվականին փաստացի ստացված 2,597.0 մլն դրամի դիմաց:

Պետական տուրքի այս տեսակի գծով 2013 թվականի ցուցանիշը ծրագրվել է, ելնելով 2007-2011թթ հավաքագրման միտումներից, 2012 թվականի սպասողական մուտքերից: Հաշվի է առնվել նաև 2012 թվականի հունիսի 1-ից կիրառության մեջ մտած նույնականացման քարտերի և կենսաչափական տվյալներ պարունակող էլեկտրոնային անձնագրերի տրամադրման համար պետական տուրքերի գանձման ազդեցությունը:

8. Լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելու համար գանձվող պետական տուրքերի գծով 2013 թվականի մուտքերը կանխատեսվել են 7,018.8 մլն դրամի չափով, որը 2012 թվականի համար հաստատված, սպասողական և 2011 թվականին փաստացի ստացված մուտքերը գերազանցում է համապատասխանաբար 3,403.0 մլն դրամով, 2,951.6 մլն դրամով և 2,745.9 մլն դրամով:

2013 թվականին պետական տուրքերի այս խմբից ակնկալվող կտրուկ աճը գլխավորապես պայմանավորված է 2013 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ մտնող օրենսդրական փոփոխություններով, որոնց համաձայն, մասնավորապես խաղատների գործունեության կազմակերպումը և շահումով խաղային ավտոմատների շահագործումը չի հարկվի, իսկ համապատասխան լիցենզիաների տրման համար գանձվող պետական տուրքերի դրույքաչափերը կավելանան 10-48 անգամ (կախված շահումներով խաղերի սարքավորումների/խաղասեղանների քանակից և համապատասխան հաստատության Երևան քաղաքի վարչական սահմաններից ուղիղ գծով ունեցած հեռավորությունից): Պետական տուրքերի այս խմբից 2013 թվականի մուտքերը ծրագրվել են 3.7 մլրդ դրամի չափով, 2011 թվականին փաստացի ստացված 1.1 մլրդ դրամի, 2012 թվականի համար ծրագրված 760.0 մլն դրամի և սպասողական 803.0 մլն դրամի դիմաց:

Լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելու համար գանձվող պետական տուրքերի գծով կանխատեսումներն իրականացվել են՝ ելնելով օրենքով նախատեսված լիցենզավորման ենթակա գործունեության տեսակների վերաբերյալ առկա քանակական տվյալներից, 2011 թվականի փաստացի և 2012 թվականի սպասողական մուտքերից:

9. Այլ ծառայությունների կամ գործողությունների համար գանձվող պետական տուրքերի գծով 2013 թվականի մուտքերը կանխատեսվել են 8,883.9 մլն դրամի չափով, որը 2012 թվականի համար հաստատված, 2012 թվականի սպասողական և 2011 թվականի փաստացի ստացված ցուցանիշները գերազանցում է համապատասխանաբար 976.1 մլն դրամով, 151.8 մլն դրամով և 817.8 մլն դրամով:

Նշված պետական տուրքերից 2013 թվականի բյուջետային մուտքերի գերակշռող մասը՝ 8,284.3 մլն դրամը (93.3%), ապահովվելու է պետական տուրքի հետևյալ 2 տեսակների հաշվին՝

- ՀՀ-ից օդային տրանսպորտի միջոցներով ֆիզիկական անձանց (օդային ուղևորների) ելքի համար գանձվող պետական տուրք, որի գծով 2013 թվականի մուտքերը կանխատեսվել են 6,386.0 մլն դրամի չափով (այլ ծառայությունների կամ գործողությունների համար գանձվող պետական տուրքերի գծով 2013 թվականի կանխատեսվող մուտքերի ամբողջ ծավալի 71.9 %-ը), 2012 թվականի համար հաստատված, սպասողական և 2011 թվականի փաստացի ստացված համապատասխանաբար 6, 163.0 մլն դրամի, 6,291.3 մլն դրամի և 5,607.8 մլն դրամի դիմաց:

Պետական տուրքի այս տեսակի գծով 2013 թվականի մուտքերը ծրագրվել են, ելնելով 2009-2011 թվականների փաստացի հավաքագրման միտումներից (կիրառվել է 2012թ սպասողականի գնահատականներում), հաշվի առնելով «Զվարթնոց» օդանավակայանի կառավարչի կողմից ներկայացված Մաստեր Պլանում նախատեսված ուղևորափոխադրումների տարեկան 1.5% աճը:

- վարորդական իրավունքի, գյուղատնտեսական ինքնագնաց մեքենաների և օդային փոխադրամիջոցների վարման իրավունքի վկայական և կորցրած վկայականի կրկնօրինակը տալու համար գանձվող պետական տուրքեր, որոնց գծով 2013 թվականի մուտքերը կանխատեսվել են 1,898.3 մլն դրամի (այլ ծառայությունների կամ գործողությունների համար գանձվող պետական տուրքերի գծով 2013 թվականի կանխատեսվող մուտքերի ամբողջ ծավալի 21.4 %-ը) չափով՝ 2012 թվականի համար հաստատված, սպասողական և 2011 թվականին փաստացի ստացված համապատասխանաբար 1,106.2 մլն դրամի, 1,808.7 մլն դրամի և 1,859.3 մլն դրամի դիմաց:

Պետական տուրքի այս տեսակի գծով 2013 թվականի մուտքերը ծրագրվել են՝ հաշվի առնելով ընթացիկ տարում հավաքագրման միտումները:

## 2. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ

Օտարերկրյա պետություններից և միջազգային կազմակերպություններից 2013 թվականին ակնկալվում է ստանալ 16.4 մլրդ դրամի չափով պաշտոնական դրամաշնորհներ, ՄԺԾԾ-ով նախատեսված 18.0 մլրդ դրամի դիմաց: Պաշտոնական դրամաշնորհների գծով ՄԺԾԾ-ով նախա-

տեսված և Նախագծով առաջարկվող գումարների միջև 1.6 մլրդ դրամ տարբերությունը պայմանավորված է պաշտոնական դրամաշնորհների կազմի և ծավալի ճշգրտմամբ, ինչպես նաև հաշվարկների հիմքում դրված 1 ԱՄՆ դոլարի և 1 եվրոյի դրամային փոխարժեքների փոփոխություններով (նշված ցուցանիշները ՄԺԾԾ-ի հաշվարկներում կազմել են համապատասխանաբար 390.95 և 522.15 դրամ, Նախագծում՝ 408.55 և 513.26 դրամ): Յուրաքանչյուր դեպքում պաշտոնական դրամաշնորհների նախատեսվող գումարները ծրագրվում են ծրագրավորման պահին առկա համաձայնագրերի կամ դոնորների հետ ձեռքբերված նախնական համաձայնությունների հիման վրա:

Մասնավորապես, 2013 թվականին պաշտոնական դրամաշնորհների ստացում է նախատեսվում՝

1. Եվրոպական հարևանության շրջանակներում ՀՀ - ԵՄ գործողությունների ծրագրով նախատեսված դրամաշնորհային ծրագրերից՝ 11.0 մլն եվրո կամ 5.6 մլրդ դրամ,

2. Նպատակային պաշտոնական դրամաշնորհային<sup>15</sup> ծրագրերից՝ 26.4 ԱՄՆ դոլար կամ 10.8 մլրդ դրամ, որից՝

- Եվրոմիության աջակցությամբ իրականացվող դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում՝ 19.0 մլն ԱՄՆ դոլար կամ 7.8 մլրդ դրամ,
- Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում՝ 2.4 մլն ԱՄՆ դոլար կամ 1.0 մլրդ դրամ,
- ԳԴՀ զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում՝ 2.7 մլն ԱՄՆ դոլար կամ 1.1 մլրդ դրամ,
- Այլ դոնորների աջակցությամբ իրականացվող ծրագրերի շրջանակներում՝ 2.3 մլն ԱՄՆ դոլար կամ 0.9 մլրդ դրամ:

Նպատակային պաշտոնական դրամաշնորհների գծով ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի ծրագրային ցուցանիշների մանրամասները ներկայացված են նախագծի N 1 հավելվածի N 15 աղյուսակում:

### 3. ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

Նախագծով այլ եկամուտների գծով մուտքերը 2013 թվականի համար ծրագրվել են 22.3 մլրդ դրամի չափով՝ 2012 թվականի համար հաստատված<sup>16</sup> 21.0 մլրդ դրամի և սպասողական 26.0

---

<sup>15</sup> Որոշակի ծախսային ծրագրերի հետ կապակցված պաշտոնական դրամաշնորհներ:



մլրդ դրամի, 2011 թվականի համադրելի փաստացի<sup>17</sup> 27.1 մլրդ դրամի դիմաց: ՄԺԾԾ-ով այլ եկամուտների գծով 2013 թվականի համար նախատեսվել է 21.3 մլրդ դրամ:

Այլ եկամուտների գծով 2013 թվականի համար ծրագրված տարեկան մուտքերը 2012 թվականի համար հաստատված ցուցանիշից ավելի են 1.3 մլրդ դրամով, իսկ 2012 թվականի սպասողական և 2011 թվականի փաստացի ցուցանիշներից պակաս են համապատասխանաբար 3.7 մլրդ դրամով և 4.8 մլրդ դրամով:

2012 թվականի սպասողական և 2011 թվականի փաստացի մուտքերի նկատմամբ 2013 թվականի ծրագրային ցուցանիշի նվազումը հիմնականում պայմանավորված է բանկերում և ֆինանսավարկային հաստատություններում գանձապետական միասնական հաշվի ժամանակավոր ազատ միջոցների տեղաբաշխումից և դեպոզիտներից ստացվող տոկոսավճարների գծով մուտքերով: Այս եկամտատեսակի ձևավորման հիմքում ընկած են ՀՀ կենտրոնական բանկում ավանդադրվող՝ տվյալ տարվա բյուջեի կատարման ընթացքում ժամանակավորապես ազատ բյուջետային միջոցների ծավալները, որոնց փոփոխությամբ էլ հիմնականում պայմանավորված է նշված տարիների փաստացի և սպասողական ցուցանիշների տարբերությունը:

Բացի նշվածից, այլ եկամուտների գծով 2013 թվականի ծրագրային ցուցանիշները 2011 թվականի փաստացի, 2012 թվականի հաստատված և սպասողական, ինչպես նաև 2013 թվականի համար ՄԺԾԾ-ով հաստատված ցուցանիշների հետ համեմատելիս պետք է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ առանձին եկամտատեսակներ ձևավորվում են արտարժույթային հիմքով, որի արդյունքում արտարժույթի փոխանակային արժեքների փոփոխությունները ևս ազդում են ստացվող համապատասխան գումարների վրա:

Բացի վերը նշված արտարժույթի փոխանակային արժեքների փոփոխությունների ազդեցությունից, ՄԺԾԾ-ով հաստատված ցուցանիշից 2013 թվականի համար այլ եկամուտների գծով ծրագրված մուտքերի շեղման դեպքում որոշիչ է եղել նաև պետության կողմից տրված վարկերի օգտագործման դիմաց տոկոսավճարների կազմի փոփոխությունը՝ պայմանավորված ՄԺԾԾ հաստատումից հետո կնքված վարկային նոր պայմանագրերի առկայությամբ: Յուրաքանչյուր դեպքում նշված եկամտատեսակի գծով նախատեսվող գումարները ծրագրվում են ծրագրավորման պահին առկա պայմանագրերի (համաձայնագրերի) հիման վրա:

Այլ եկամուտների կազմում հաշվառվող առանձին եկամտատեսակների գծով 2013 թվականի մուտքերը ծրագրվել են՝ հաշվի առնելով դրանց առանձնահատկությունները, նախորդ տարիներ

---

<sup>16</sup> Այս բաժնում որպես ՀՀ 2012 թվականի պետական բյուջեի այլ եկամուտների համար հաստատված ցուցանիշներ դիտարկվել են ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 22-ի N 1919-Ն որոշման N 6 հավելվածով ՀՀ 2012 թվականի պետական բյուջեի այլ եկամուտների գծով հաստատված ցուցանիշները:

<sup>17</sup> Առանց ՀՀ 2011 թվականի պետական բյուջեի՝ սույն մասի 2-րդ տողատակում նշված արտաբյուջետային միջոցների փաստացի մուտքերի, որոնցից 17.0 մլրդ դրամը հաշվառվում են այլ եկամուտների կազմում:

րի մուտքերի հավաքագրման միտումները, ինչպես նաև ընթացիկ տարվա անցած ժամանակահատվածի փաստացի մուտքերը:

Ստորև ներկայացվում են 2013 թվականի այլ եկամուտների գծով կանխատեսվող մուտքերի՝ 2012 թվականի հաստատված և սպասողական, 2011 թվականի փաստացի մուտքերի նկատմամբ համեմատականը, հաշվարկներում կիրառված մեթոդաբանության համառոտ նկարագրությունը:

1. Պետական հիմնարկների հաշվեկշիռներում հաշվառվող գույքի (բացառությամբ հողի) վարձակալության և օգտագործման դիմաց գանձվող վարձավճարները 2013 թվականի համար կանխատեսվում են շուրջ 716.5 մլն դրամ, 2012 թվականի համար հաստատված 735.5 մլն դրամի, սպասողական 736.0 մլն դրամի և 2011 թվականին փաստացի ստացված 830.0 մլն դրամի դիմաց: Կանխատեսումներում հիմք են ընդունվել պետական կառավարման մարմինների կողմից ներկայացված տեղեկությունները 2012, 2013 թվականներին վարձակալության տրված (տրվելիք) տարածքների մակերեսների և վարձակալական պայմանագրերի համաձայն վճարվելիք վարձավճարների վերաբերյալ, ինչպես նաև համապատասխան բյուջետային փաստացի մուտքերի գծով գանձապետական տվյալները:

2. Բանկերում և ֆինանսավարկային հաստատություններում գանձապետական միասնական հաշվի ժամանակավոր ազատ միջոցների տեղաբաշխումից և դեպոզիտներից ստացվող տոկոսավճարներից, իրավաբանական անձանց կապիտալում կատարված ներդրումներից ստացվող շահաբաժիններից 2013 թվականին ակնկալվում են 1,910.0 մլն դրամի չափով մուտքեր: Մասնավորապես.

2.1 Բանկերում և ֆինանսավարկային հաստատություններում պետական բյուջեի ժամանակավոր ազատ միջոցների տեղաբաշխումից և դեպոզիտներից ստացվող տոկոսավճարների գծով մուտքերը ծրագրվել են 1,400.0 մլն դրամ՝ 2012 թվականի համար հաստատված 885.0 մլն դրամի, սպասողական 5,018.0 մլն դրամի և 2011 թվականի փաստացի ստացված 5,558.2 մլն դրամի դիմաց: 2013 թվականի մուտքերն ապահովվելու են հիմնականում ի հաշիվ ժամանակավորապես ազատ բյուջետային միջոցները ՀՀ կենտրոնական բանկում ավանդադնելու դիմաց ՀՀ կենտրոնական բանկի և ՀՀ ֆինանսների նախարարության միջև կնքված «Հաշվի սպասարկման մասին» պայմանագրի հիման վրա վճարվելիք տոկոսավճարների:

2.2 Իրավաբանական անձանց կապիտալում կատարված ներդրումներից ստացվող շահաբաժիններից 2013 թվականին ակնկալվում են 510.0 մլն դրամի չափով մուտքեր՝ 2012 թվականի համար հաստատված ու սպասողական 500.0 մլն դրամի և 2011 թվականին փաստացի ստացված 688.1 մլն դրամի դիմաց: Շահաբաժինների գծով 2013 թվականի կանխատեսվող մուտքերը ծրագրելիս հաշվի է առնվել ՀՀ կառավարության 2011 թվականի մարտի 3-ի «Պետության սեփականու-

թյուն հանդիսացող բաժնեմաս ունեցող առևտրային կազմակերպությունների շահույթի բաշխման, շահութաբաժինների հաշվարկման և Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի դեկտեմբերի 5-ի N 1194 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 202-Ն որոշմամբ հաստատված կարգի համաձայն պետական մասնակցության դիմաց պետական բյուջե վճարման ենթակա տարեկան շահութաբաժինների հաշվարկման բազայի 50%-ի չափով պետական բյուջե կատարվելիք մասհանումների սահմանումը:

3. Պետության կողմից տրված վարկերի օգտագործման դիմաց տոկոսավճարները 2013 թվականին կանխատեսվում են 6,449.6 մլն դրամի չափով: Մասնավորապես.

3.1 ՀՀ ռեզիդենտներին տրամադրված վարկերի օգտագործումից 2013 թվականին ակնկալվում է ստանալ 6,261.7 մլն դրամ, որը ծրագրվել է՝ հաշվի առնելով համապատասխան պայմանագրերով նախատեսված դրույթները: Մասնավորապես, 2013 թվականին տոկոսավճարների գծով մուտքերն ապահովվելու են ի հաշիվ «Բարձրավոլտ էլեկտրական ցանցեր», «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր», «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ներին, «ՓՄՁ ներդրումներ» ունիվերսալ վարկային և այլ կազմակերպություններին տրամադրված վարկերի դիմաց հաշվարկված տոկոսավճարների:

3.2 Հայաստանի Հանրապետության ոչ ռեզիդենտին տրամադրված վարկերի գծով 2013 թվականի բյուջետային մուտքերը կգոյանան Վրաստանի Հանրապետությանը տրամադրված վարկի սպասարկման տոկոսավճարներից, որոնք կկազմեն 459.8 հազ. ԱՄՆ դոլար կամ մոտ 187.9 մլն դրամ:

4. Տիրազուրկ, ժառանգության իրավունքով, ինչպես նաև ֆիզիկական և իրավաբանական անձանցից (բացառությամբ ՀՀ համայնքների, միջազգային կազմակերպությունների և օտարերկրյա պետությունների) նվիրատվության կարգով պետությանը որպես սեփականություն անցած դրամական միջոցներից, ինչպես նաև հիմնական միջոց կամ ոչ նյութական ակտիվ չհանդիսացող գույքի օտարումից ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի եկամուտները ծրագրվել են 2012 թվականի սպասողականի՝ 73.0 մլն դրամի չափով՝ 2012 թվականի համար հաստատված 47.0 մլն դրամի և 2011 թվականի փաստացի ստացված 44.0 մլն դրամի դիմաց:

5. Իրավախախտումների համար գործադիր, դատական մարմինների կողմից կիրառվող պատժամիջոցներից 2013 թվականի մուտքերը ծրագրվել են 2,633.5 մլն դրամի չափով՝ 2012 թվականի համար ծրագրված 3,026.0 մլն դրամի, սպասողական 2,557.4 մլն դրամի և 2011 թվականին փաստացի ստացված 2,825.4 մլն դրամի դիմաց: Կանխատեսումները կատարված են ըստ համապատասխան իրավական հիմքով վարչական պատժամիջոց կիրառող պետական կառավարման մարմինների՝ հաշվի առնելով համապատասխան պատժամիջոցների գծով 2005-2011 թվականներ

րի մուտքերի հավաքագրման միտումները, ինչպես նաև այս բնագավառում իրականացված օրենսդրական փոփոխությունները:

6. Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ պետական բյուջե մուտքագրվող այլ եկամուտների գծով 2013 թվականի պետական բյուջեի մուտքերը գնահատվել են 10,487.4 մլն դրամի չափով: Եկամուտների այս խմբի մեծ մասը կազմում են ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի ստորաբաժանումների կողմից 2013 թվականին մատուցվելիք ծառայությունների դիմաց ստացվելիք վճարները՝ 4,134.6 մլն դրամի չափով և ռադիոհաճախականության օգտագործման վճարները՝ 5,300.2 մլն դրամի չափով: Վերջինս ծրագրվել է, հաշվի առնելով Նախագծի N 7-րդ հավելվածում ներկայացված ռադիոհաճախականության օգտագործման վճարների չափերը 2013 թվականի համար: Հաջորդ խոշոր բաղադրիչներն են հայկական երկաթուղու համակարգի վերաբերյալ կոնցեսիոն պայմանագրով նախատեսված տարեկան վճարը և «Արմավիա» ՍՊԸ-ի կողմից օդուղիների հատկացման դիմաց վճարը, որոնք 2013 թվականի համար ծրագրվել են համապատասխանաբար 328.8 մլն դրամի և 266.8 մլն դրամի չափով:

## ՄՈՒՏՔԵՐ ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ՕՏԱՐՈՒՄԻՑ

Ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքերը ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի նախագծով ծրագրվել են շուրջ 1.3 մլն դրամի չափով, 2012 թվականի համար հաստատված 1,771,5 մլն դրամի և 2011 թվականին փաստացի ստացված 2,051.8 մլն դրամ մուտքերի դիմաց:

2012 թվականի համար ծրագրված գումարից և 2011 թվականին փաստացի ստացված մուտքերի համեմատությամբ 2013 թվականի համար բյուջետային մուտքերի այս տեսակի գծով ծրագրված մուտքերի էական տարբերությունը բացատրվում է շուրջ 1,734.6 մլն դրամի չափով Երևան քաղաքի վարչական սահմաններում գտնվող պետական սեփականություն հանդիսացող հողերի օտարումից ծրագրված/ստացված մուտքերով: 2013 թվականին ոչ ֆինանսական ակտիվների օտարումից մուտքերը ծրագրվել են նախորդ տարիներին կնքված առուվաճառքի պայմանագրից բխող՝ տարաժամկետ վճարման գծով: